

ՊԱՏՄԱԿԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՕԶՆԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆԵԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒԹԵԱՄԲ

Հայ եկեղեցու պատմության նոր շրջանի նշանալի դեմքերից է Մաղափա Արքեպիսկոպոս Օրմանեանը, ինքնատիպ մի անձնաւորութիւն, բարձրաստիճան հոգեւորական, որը 12 տարի անընդմէջ եղել է Կ. Պոլսի Հայոց Պատրիարք համիդեան բռնատիրական պայմաններում, իր իսկ արտայայտութեամբ եղել «գազանագոռւսպ եւ լարախաղաց» եւ միեւնոյն ժամանակ զբաղուել գիտական գործունէութեամբ՝ իրենից յետոյ թողնելով պատկառելի գիտա-գրական ժառանգութիւն, որում առանձնանում է յատկապէս եռահատոր «Ազգապատում» կոթողային աշխատութիւնը, որը ունի հետեւեալ խորագիրը. «Հայ Ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմութեամբ»: Նշուած «յարակից ազգային պարագաները» հայ ժողովրդի պատմութիւնն է քրիստոնէութիւն ընդունելու ժամանակից, գրուած մի անհատի կողմից, որը սակայն պատիւ կը բերէր եւ մի ողջ գիտական հաստատութեան:

Աշխատութիւնն սկսում է քրիստոնէութեան առաջին դարով եւ Թադէոս ու Բարդուղիմէոս առաքելների՝ Հայաստանում քրիստոնէութեան ներկայացմամբ: Ա. հատորի «Նախագիտելիք» հատուածում հեղինակը գրում է, որ իր «աշխատութեան մէջ պէտք է փնտռել ոչ քրիստոնէական հետազոտութիւններ, ոչ գիտական ուսումնասիրութիւններ եւ ոչ կազմաւորեալ բանալէներ: (1) Սակայն եղելութիւններն ու իրադարձութիւնները շարադրելու ընթացքում Օրմանեանն ի յայտ է բերում վերլուծող եւ քննախոյզ գիտնականի մօտեցում իր շարադրած

նիւթի նկատմամբ: Հայոց եկեղեցու պատմութիւնը նա շարադրում է՝ մեծապէս օգտուելով եւ յենուելով հայ պատմիչների աշխատութիւնների վրայ: Փաստերը վերցնելով տուեալ ժամանակահատուածի պատմիչների գործերից, շարադրանքի ընթացքում Օրմանեանը ցուցաբերում է հմուտ գիտնականի մօտեցում, երբեմն՝ համաձայնուելով, յաճախ՝ ժխտելով ու տարակուսելով, ապա եւ վերլուծելով տարբեր պատմիչների յայտնած տեղեկութիւնները:

Օրմանեան հետազօտողի այս մօտեցումն է մեզ հնարաւորութիւն տալիս տարբեր հարցերի վերլուծութեան ընթացքում անդրադառնալ հոգեւորական-գիտնականի տեսակէտների փոփոխութեան: Նման մի համեստ նպատակ է հետապնդում այս յօդուածը Յովհաննէս Օձնեցի Կաթողիկոսին տրուած նրա գնահատականների մասին: «Ազգապատում»ի Օձնեցուն նուիրուած բաժինը կազմում է 45 էջ, որտեղ Օրմանեանը կատարում է 129 յղում 20 հեղինակներից՝ միջնադարեան պատմիչներից եւ նոր շրջանի պատմաբաններից: Գնահատելով Օձնեցուն որպէս «Հայրապետական Աթոռի փառքերէն մէկ», որն իր վարչական եւ գիտական հմտութեան շնորհիւ ստացել է «իմաստասէր» բնորոշումը, Օրմանեանը նշում է. «Այդ իմաստասիրական բառերը կը ցուցանեն, թէ Յովհաննէս հեղինակն ուսում ալ առած եւ յունական ուսումնարանի մէջ կրթուած պիտի ըլլայ, որչափ ալ ինքն այդ մասին յիշատակութիւն չըներ իր վրայ խօսած ատեն»: (2) Այդ հանգամանքը սակայն դեր չի խաղացել, եւ կաթողիկոսը թէ՛

կրօնական եւ թէ՛ քաղաքական առումով կուլ չի գնացել յունականին եւ միշտ «յոյներէ հեռի մնալու ուղղութիւնը պահեց»:

Պատմաբան Օրմանեանի վերլուծական կարողութիւններն ընդգծում են, երբ նա, համադրելով տարբեր պատմիչների հաղորդած փաստերը, նշում է, թէ Օձնեցու կաթողիկոսութեան թուրքը ո՛ր ամիրապետների իշխանութեան տարիներին է համընկնում: Ըստ Օրմանեանի՝ 717-720թթ. ամիրապետ է եղել Էոմեր (Օմար) Բ-ն, 720-724թթ.՝ Եգիդ Բ-ն, 724 թուից յետոյ, 19 տարի անընդմէջ՝ Հեշամը (այդ թուականները տարբեր պատմիչներ նիշտ չեն գրում): Ժամանակակից պտմաբանները ընդունում են գլխաւորապէս Օրմանեանի տուեալները: Փաստօրէն, Օձնեցու հայրապետութեան տարիները համընկնում են երեք ամիրապետների իշխանութեան տարիներին: Այդ ժամանակամիջոցում Հայաստանում եղել են երկու արաբ ռստիկան՝ Արդուլագիզը եւ Վալիդը:

Համադրելով փաստերը, Օրմանեանը գտնում է, որ Ստեփանոս Տարօնեցու կողմից նշուած ամիրապետի նստավայրը Բաղդադը համարելը սխալ է: Ծիշտը նա համարում է Դամասկոսը, որն ընդունուած է նաեւ այսօրուայ գիտական գրականութիւնում: Համադրելով Կիրակոս Գանձակեցու, Ասողիկի եւ Սամուէլ Անեցու ասածները, որոնցից վերջին երկուսը չեն նշում ամիրապետի անունը, իսկ Գանձակեցին գրում է Հեշամի մասին, Օրմանեանը այդ փաստը սխալ է համարում, նիշտը, նրա կարծիքով, Էոմերն է (Օմարը), որը ամիրապետ էր 720 թ. առաջ եւ, ըստ Օրմանեանի, նա էր կանչել եւ ընդունել Օձնեցուն:

Միջանկեալ ցանկանում ենք յիշեցնել, որ Յովհաննէս Կաթողիկոսը

բնութիւնից առատ պարգեւ էր ստացել: Նա ունէր արտակարգ շքեղ արտաքին՝ «յոյժ գեղեցիկ տեսքամբ» (Ասողիկի խօսքերն են) եւ «աղկեալ ալեօք մօրուս, որ իջանէր մինչեւ զգրպանս զգեստու նորա»: Պատմիչները նշում են, թէ ինչպէս է նա հոգ տարել իր գեղեցիկ արտաքինը առաւել տպաւորիչ դարձնելու համար, «ի պատուական երանգէ նիւթից զգեստաւորեալ պննագարդել, եւ ոսկի մանր խարտոցիւ աղացեալ եւ իւղովք անուշիւք յայն ընդ խառնեալ, փչել ընդ ծաղկեալ մօրուսն»:

Այդ բոլորի հետ մէկտեղ սակայն Օձնեցին վարում էր «խստամբեր կեանք» եւ օրինակ էր դառնում բոլորի համար իր «պաիօք եւ աղօթիւք»: Ժողովուրդն այնպէս էր գնահատում իր Հայրապետին, որ նրա անուան շուրջը աւանդապատումներ էին հիւսւում դեռեւս կենդանութեան օրօք: Այդ ամէնը պատճառ է դառնում ամիրապետի հրաւերին եւ շքեղ ընդունելութեանը, որի ընթացքում վերջինս զարմացած հարցնում է Իմաստասէրին, թէ ինչպէ՞ս Քրիստոսի հետեւորդները այդպէս «շքեղ կը զարդարուին»: Կաթողիկոսն այդ բոլորը բացատրելով «իշխանութիւնը ազդեցիկ ընել տալու» նպատակով, ամիրապետին ցոյց է տալիս իր հանդերձների տակ անմիջապէս մարմինի վրայ կրած «այծեայ ցփսիները» եւ «դժոխքմբերելի քրձերը»:

Զարմացած ու զարհուրած ամիրապետը Օձնեցի Կաթողիկոսին արժանացնում է արեւելեան շքեղ ընդունելութեան: Ե՛ւ պատմիչները, ե՛ւ Օրմանեանը բարձր են գնահատում Հայոց Հայրապետի հրաժարումը անձնական նպատակ ունեցող խնդրանքներից: Կաթողիկոսի ամենամեծ խնդրանքն էր՝ Հայոց Եկեղեցին ազատել հալածանքներից, հայ հոգեւորականներին՝

հարկերից, հայոց դաւանանքին տալ ազատութիւն: Հրաժարումն անձնական շնորհներից բարձրացնում է կաթողիկոսին ամիրապետի աշխուժ, եւ նա ազատում է նաեւ խրամի եւ Նախիջեւանի եկեղեցիներում այրուած հայ նախարարների գերի ազգականներին՝ վերականգնելով նրանց նախարարական իրաւունքները:

Օրմանեանը բարձր է գնահատում Իմաստասէր Կաթողիկոսի դիւանագիտական եւ քաղաքական կարողութիւնները, նրա նոր մարտավարութիւնը՝ «վերջնապէս եւ կատարելապէս խզել Յունաց հետ յարաբերութիւնները, եւ ամբողջապէս կապուիլ արաբական տիրապետութեան հետ»:(3) Այդ յարաբերութիւնները վերաբերում են եւ կրօնական, եւ քաղաքական ասպարէզին: Քաղաքական տեսանկիւնով Օսմանցուն օգնեց ամիրապետը, եւ ոստիկանի ձեռքով Հայաստանից հեռացուեցին յոյն վերակացուներն ու զինուորները: Կրօնական տեսակէտից Հայոց Հայրապետը «խստիւ հետապնդեց, ջնջել եւ վերցնել քաղկեդոնիկ դաւանութեան եւ յունական ծէսին համակերպութիւնները»:(4) որոնք տեղ էին գտել Եզր Կաթողիկոսի զիջումների պատճառով:

Քննադատելով «Սակս ժողովոց» գրուածքը, Օրմանեանն ապացուցում է, որ Եզրից մինչեւ Եղիա ընկած վեց կաթողիկոսները, որոնք դիտուում են որպէս քաղկեդոնականութիւն ընդունած կաթողիկոսներ, չեն եղել քաղկեդոնիկ, եւ Հայոց եկեղեցին նրանց ժամանակ ոչ թէ շեղուել էր իր հնաւանդ դաւանութիւնից, այլ ունեցել «յունաց հետ կազմակերպուելու տկարութիւնը»:(5) Դրանք «տկարութիւններ ու շեղումներ» էին, որոնք բխում էին քաղաքական թելադրանքից եւ նկատուում էին ոչ թէ ողջ Հայաստանում, այլ «յունաց

տիրապետած» գաւառներում: Օսմանցին հասաւ նրան, որ նոյնիսկ այդ գաւառներում գերակայ դարձաւ Հայոց Հայրապետի իշխանութիւնը:

Կաթողիկոսի ձեռնարկած գործերից Օրմանեանը բարձր է գնահատում Հայ եկեղեցու հնաւանդ ծէսերն ու սովորութիւններն ամրապնդելու, սպրդած գեղծումները վերացնելու համար հրաւիրուած ժողովը: Հետազօտելով Օսմանցու ժամանակի եւ հետագայ շրջանի պատմիչների աշխատութիւնները, Օրմանեանը փաստում է, որ նրանցից ոչ մէկը չի նշում ժողովի գումարման վայրը, թուականը եւ մասնակիցներին: Համադրելով փաստերը, նա յանգում է այն եզրակացութեան, որ ժողովը գումարուել է Օսմանցու՝ Դամասկոսից վերադառնալուց յետոյ, այսինքն՝ 720թ., իսկ ժողովի գումարման վայրը, առանց տատանուելու, համարում է Դուիւնը, որովհետեւ այնտեղ էր Կաթողիկոսական Աթոռը, եւ այնտեղ էին գումարում ազգային եկեղեցական ժողովները: Մեր ժամանակի պատմաբանները համամիտ են այս հարցում եւս:

Օրմանեանը բարձր է գնահատում Օսմանցու՝ ժողովի բացման կապակցութեամբ ունեցած ելոյթը՝ «այն գեղեցիկ նառը, ... զոր խօսած է Իմաստասէր Կաթողիկոսը, ժամանակին պէտքերը բացատրելու եւ կարեւոր խնդիրները ժողովականաց մտադրութեան յանձնարարելու համար» (6): Նշելով, որ նախընթաց ժողովներում նման ատենաբանութիւններ չեն եղել, Օրմանեանը դրանով ընդգծում է Օսմանցու արժանիքները, իմաստասիրական, աստուածաբանական եւ ծիսական «կէտերու խորին հմտութիւնը», բայց ակնարկում է յայտնում, որ այդ ատենաբանութիւնից սերունդներին չի հասել չորս գլուխ՝ Ժ-ից ԺԵ, դա

համարելով հետագայ պատմիչների կամ գրիչների մեղքը:

Մանրամասն վերլուծելով Դուինի ժողովում ընդունած եւ Կանոնագրքի մէջ մտած 32 կանոնները, նա մէկ առ մէկ բացատրում է իսկական ողջ համակարգը, ապա շեշտում Մծղնէական եւ Պաւլիկեան աղանդների դէմ պայքարելու միջոցները եւ անհրաժեշտութիւնը: Կանոնների վերլուծութիւնից ամենահետաքրքիրը Օրմանեանի եզրակացութիւնն է. «Օձնեցիին կանոնները մեզի կ'իմացնեն, թէ ինչ տեսակ գեղծումներ կը յաճախէին այդ միջոցին Հայ Եկեղեցւոյ մէջ, եւ պէտք է հետեւցնել, թէ հակառակ ժամանակին շփոթ կացութեան, բացարձակապէս ծանր կէտեր չեն յիշուածները» (7):

Գնահատելով Օձնեցու ձիրքերը, Օրմանեանը նկատում է, որ Հայոց Կաթողիկոսը «գատելով եւ գտելով՝ Հայ Եկեղեցու կանոնագիրքը կազմեց»: Օձնեցու ժամանակից ի վեր այն ծառայում էր իբրեւ Հայ Եկեղեցու օրինագիրք, որի ամենամեծ արժանիքը Օրմանեանը համարում էր այն, որ «Հայ Կանոնագիրքը Արեւմտեանը կը կանխէ, եւ աւելի առաջ է քան Իսիդորոս Մերկատորի գործը, որ Թ (9րդ) դարուն կազմուած է եւ ոչ է (7րդ) դարու հեղինակ Իսիդորոս Հիսպաղիոյ եպիսկոպոսին գործն է, որով մեր Օձնեցին Իսիդորոսէն դար մը առաջ յօրինած կ'ըլլայ Հայոց Կանոնագիրքը» (8):

Հոգեւորականներին եւ իրաւունքի պատմութեան մասնագէտներին թողնելով Հայոց Կանոնագրքի յօդուածների վերլուծութիւնը, անդրադառնանք «Գիրք Թղթոց»ին տուած Օրմանեանի գնահատականին, ուր վերջինս ապացուցում է, որ այդ աշխատութիւնը, անտարակոյս, պատկանում է Օձնեցուն. «Եւ ո՞վ աւելի յարմար կրնար ըլլալ

հայրապետանոցի մէջ հնաւանդ դաւանութեանց վաւերագիրներու արձանագրութիւնը բանալու, եթէ ոչ նա ինքն, որ աւանդական բարեկարգութեան վաւերագիրները արձանագրելու գաղափարը յղացաւ եւ գործադրութեան ձեռնարկեց» (9):

Մերժելով մինչ այդ եղած կարծիքները, որոնք «Գիրք Թղթոց»-ի հեղինակ են համարել Մովսէս Յուրտավցուն, Օրմանեանն ապացուցում է, որ այդ եպիսկոպոսը հայրապետանոցի մէջ պաշտօնական արձանագրութիւն գրելու իրաւունք չունէր, բացի այդ. «Գիրք Թղթոց»ում տեղ գտած օրէնքների մեծ մասը նրանից յետոյ է ընդունուել:

Հայ Եկեղեցու դաւանութեան նախանձայոյց պաշտպան Օրմանեանը բարձր է գնահատում Օձնեցու այն ճառերը, որտեղ հերքում են Պաւլիկեանների եւ երեսութականների մոլորութիւնները եւ բացայայտում Իմաստասէր Հայրապետի հմտութիւնները ոչ միայն Աստուածաշնչի, այլեւ Եկեղեցու հայրերի եւ տարբեր փիլիսոփաների երկերի իմացութեան մէջ: Քննելով Օձնեցու մեզ հասած ճառերը, Օրմանեանը յաճախ նշում է, որ տուեալ ճառը չնայած պարունակած նիւթով հնարաւոր է, որ Օձնեցուն լինի, սակայն գրութեան ոճը չի կրում Իմաստասէրի վեհութիւնը, ուստի եւ նրա հեղինակութիւնը չէ:

Օձնեցու գործունէութեան կարեւոր դրուագներից է հայ եւ ասորական յարաբերութիւններին նոր զարկ տալը եւ այդ նպատակով հրաւիրած Մանազկերտի ժողովը, որը յատուկ էննութեան է ենթարկել Օրմանեանը: Պարզութիւն մտցնելով ժողովի վայրը Մանազկերտը ընտրելու հարցում (դա արար ուստիական Վալիդի պահանջն էր), ընդգծելով, որ ժողովի հրաւիրման գլխաւոր նպատակը եղել է կրօնական՝ անապականութեան

խնդրի շուրջ ծագած ծայրայեղ մօտեցումները եւ երեւութականութիւնը հերքելը, Օրմանեանը ճիշտ է համարում նաեւ Սամուէլ Անեցու կարծիքը, որ այդ ժողովը հրաւիրուել էր «վասն Քաղկեդոնի»։ Այդ ժողովում մի անգամ եւս հաստատուեց հայերի եւ ասորիների միաբանութիւնը՝ անկախ այն ծիսական կէտերից, որոնց մէջ երկու եկեղեցիները տարակարծիք մնացին։

Մանազկերտի ժողովը Օրմանեան համարում է Օձնեցու գործունէութեան վերջին դրուագը, որից յետոյ նա առանձնացաւ եւ իր ծննդավայրում եւ Սոթից լեռան մօտ իր կողմից կառուցուած եկեղեցում նուիրուեց աղօթական կեանքի՝ «խաչաչարչար ճգնութեան»։ 728թ. Ապրիլի 17ը (ըստ Յայսմաւուրբի) համարում է նրա մահուան օրը, իսկ Արդվի գիւղը՝ նրա ամփոփման վայրը։ Օրմանեանը այսպէս է գրում Օձնեցու մասին. «Օձնեցին կաթողիկոսական Գաւազանագիրին լուսաւոր պարծանքներէն մէկն է իր ուսումնական զարգացմամբ, եկեղեցական նախանձաշուքութեամբ եւ վարչական կարողութեամբ, որով նոր կեանքի նուիրագործումը կատարեց ազգին մէջ, խաղաղ կենցաղ մը պատրաստելով քաղաքականապէս եւ անխառն եկեղեցական կացութիւն մը եկեղեցականապէս։⁽¹⁰⁾

Ինչպիսի՞ վերաբերմունք են դրսեւորել Օձնեցու նկատմամբ հռոմէադաւան հայերը։ Օրմանեանն այդ հարցին տալիս է հետաքրքիր պատասխան։ Նրանք չեն համարձակուել գովեստով արտա-

յայտուել հակաքաղկեդոնիկ Հայրապետի մասին, բայց եւ չեն ցանկացել վիրաւորել այդպիսի մի պայծառ անձնաւորութեան։ Նրանց փոխարէն այդ գործն իր վրայ է վերցրել Կղեմէս վարդապետ Գալանոսը։ Հայ եւ Հռոմէական եկեղեցիների միացման հարցերին նուիրուած իր աշխատութեան մէջ նա Օձնեցուն փորձում է անարգել տարբեր արտայայտութիւններով, անգամ զարմանալով, որ նրան սուրբ են համարել։

Միխթարեան միաբանութեան անդամները խորշելով հետեւել Գալանոսին, Օձնեցուն բարձրացնելու համար նրան ներկայացրել են որպէս քաղկեդոնիկ։ Չամչեանն իր «Պատմութիւն Հայոց»-ի մէջ, 102 էջ է նուիրել այդ տեսակէտն ապացուցելու համար։ Նա փոխել է Մանազկերտի ժողովի հրաւիրման ժամանակը, ստեղծել ժողովի հրաւիրող նոր անձ՝ Յովհաննէս Մանազկերտցի։ Չամչեանի աշակերտները նրան փոխարինեցին Յովհաննէս Տեկորեցիով, իսկ քննարկելով Օձնեցու ճանքը, նրան համարել են ուղղափառ եւ պաշտպանել Պրոպագանդայի գրաքննութեան յարձակումներից։

Այսօր էլ, երբ օրուայ հրամայականն է պայքար մղել զանազան աղանդների դէմ, որոնց գործունէութիւնը միտուած է ազգային միասնութիւնը քայքայելուն, Յովհաննէս Օձնեցու գործունէութիւնը մի նոր խորհուրդ է ստանում, որովհետեւ պաշտպանելով Հայ եկեղեցու ինքնութիւնը, Իմաստասէր Հայրապետը պաշտպանել է եւ հայութեան ինքնութիւնը, ազգութեան ինքնութիւնը։

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՔ

Է. Ա. ԿՈՍՏԱՆԴԻՆ

¹ Մադաքիա արքեպս. Օրմանյան, Ազգապատում, Ա հատոր, Երևան, 2001 թ., էջ 1:

² Օրմանյան Մ., Ազգապատում, Ա հատոր, էջ 953:

³ Նույն փնդում, էջ 960-961:

⁴ Նույն փնդում, էջ 961:

⁵ Նույն փնդում:

⁶ Նույն փնդում, էջ 965:

⁷ Նույն փնդում, էջ 967:

⁸ Նույն փնդում, էջ 968-969:

⁹ Նույն փնդում, էջ 971:

¹⁰ Նույն փնդում, էջ 983: